Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
ապրիլի 30 -ի N 228 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«Կորոնավիրուսի դեմ կանխարգելիչ գործողությունների շրջանակներում պաշտպանիչ դիմակների և պաշտպանիչ ակնոցների ձեռքբերում»

1.	Ծրագրի նպատակը	Կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման և հաղթահարման ապահովման նպատակով նախատեսվում է «Կորոնավիրուսի դեմ կանխարգելիչ գործողությունների շրջանակներում պաշտպանիչ դիմակների (8101 և 9101 ծածկագրերով) և պաշտպանիչ ակնոցների» ձեռքբերում, որոնք անհատույց տրամադրվելու են «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպությանը»:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երեւան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 5,801,350 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2020 թ. մայիսի 15-ից մինչև 2020թ. հուլիսի 15-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է ծրագրի իրականացման ժամկետում գնել 3000 հատ 8101 ծածկագրով պաշտպանիչ դիմակներ, 1000 հատ 9101 ծածկագրով պաշտպանիչ դիմակներ և 50 հատ պաշտպանիչ ակնոցներ: Արժեքը՝ 5,801,350 դրամ
10.	Ձեռքբերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	3000 հատ 8101 ծածկագրով պաշտպանիչ դիմակներ, 1000 հատ 9101 ծածկագրով պաշտպանիչ դիմակներ, 50 հատ պաշտպանիչ ակնոցների ձեռքբերում՝ 5,801,350 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու եւ գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ